

ՊԱՏՄԱԳԻՏԵԱՆ

ՌՈՒՄ ԱԶԳԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

I

Ուղիղ 300 տարի առաջ, 1613 թ. փետրուարի 21-ին Մոսկովայի Ուսպենսկի տաճարում մի հաճախուհի իրարանցում կար։ Այդտեղ հաւաքուել էին լաշնարձակ Մոսկովեան պետութեան բոլոր ծայրերից ներկայացուցիչներ, բազմաթիւ իշխաններ ու բոյեարներ, 60-ից աւելի բարձրաստիճան հոգեւորականներ, կրկնապատիկ և աւելի քաղաքների ներկայացուցիչներ, նոյնիսկ գիւղացի պատգամաւորներ— Ռուսաստանի հեռաւոր ու մօտիկ նահանգներից եկել հաւաքուել էին ու շտրաթներով իրար հետ վիճելուց, աղմկելուց և պայքարելուց յետոյ վերջապէս այդ օրը վճռել էին երկրին անպատճառ թաղաւոր տալ և պետութիւնը ազատել այն խառնակ ու տարրալուծուած դրութիւնից, որն իրաւամբ ռուսաց պատմութեան մէջ յայտնի է «Խառնակ շրջան—Омутное время» անունով։ Մի շրջան, որ տևելով 15 տարի, քայքայեց ու ջլատեց երկրի ուժերը, իշխանը իշխանի դէմ հանեց, քաղաքացուն ազնուականի, երբ սպառուած արքայական տան մօտ կանգնած իշխանները թաղին տիրանալու համար շատ դժբախտութիւն բերին երկրի ու ժողովրդի դիմին։ Երբ երկիրը տեսաւ Բորիս Գոդունովի, կեղծ Դիմիտրիյ-ների և Վասիլիյ Շույսկու տիրապետութեան աղմկոտ, խռովայոյզ օրերը և յոգնեց։ Ու այժմ հաստատ վճռով եկել հաւաքուել էր Մոսկովի պետութեան մայրաքաղաքը—ու այդ փառահեղ տաճարում ուզում էր

երկրին թագաւոր տալ, հարազատ ու բնիկ մի թագաւոր ու այդպիսով վերջ դնել ներքին աղմուկներին, ազդամիջեան քայքայիչ կռիւներին:

Պատմական մեծ մոմենտ էր այն օրը — փետրուարի 21-ը, 15 տարի շարունակ երկիրը կասկածելի, հազարաւոր աղմուկների պատճառ դարձող, յաճախ ապօրինի թագաւորներ էր ունեցել: Այժմ հարկաւոր էր մի թագաւոր ընտրել, որ բոլորի՝ բովանդակ երկրի համար ընդունելի լինէր: Բնական է, որ Ուսպենսկի տաճարում հաւաքւող ռուսաց երկրի պատգամաւորները շատ ջանքեր պիտի թափէին սանձահարելու մի քանի իշխանների ախորժակները, որոնք դահի էին ձգտում, այլ և կտարելու այնպիսի իշխանների յամառութիւնը, որոնք ցանկանում էին Մոսկովի դահի վերայ տեւնել օտար թագաւորի, որովհետեւ օտար թագաւորների օրով նրանք կը կարողանային աւելի ազդեցութիւն ձեռք բերել և ուղած գերը խաղալ պետութեան մէջ: Սակայն իշխանների այդօրինակ ցանկութիւններ ժողովի մէջ ուժեղ դիմադրութեան են հանդիպում բուն ժողովրդի-քաղաքացիների և զիւղացիների կողմից, որոնք լսել անդամ չէին ուղում օտար թագաւորի մասին, որովհետեւ շատ լաւ գիտէին թէ լեհը կամ շվեդը կամ գերմանացին չի կարող հասկանալ ռուս ժողովրդի, ռուս երկրի ներքին կեանքը և չի լինի այդ երկրի համար խնամող, ցաւող հայր:

Մոսկովեան պետութեան դահին մի քանի թեկնածուներ կային, որոնցից իւրաքանչիւրը բուռն և զօրեղ պաշտպաններ ունէր ժողովականների մէջ: Բայց թեկնածուներից յատկապէս մէկը բոլորի ուշադրութիւնը գրաւում էր իւր գիրքով և տոհմային իրաւունքներով. դա Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովն էր: Ռուսական դահի վրայ նրա իրաւունքները գալիս էին Իվան Դ-ի ժամանակներից: Այս թագաւորի առաջին կինը Նիկիտա Ռոմանովիչի քոյր Անատասիա Ռոմանովնան էր: Այդպիսով Ռոմանովների տոհմը կապւում էր ռուսաց թագաւորող տան հետ: Եւ երբ հարազատ թագաւորների սերունդը 1598 թուին սպառւում է, բնականաբար կողմնակի թեկնածուներից

ամենից զօրեղներից մէկը Ռոմանով ընտանիքը կարող էր լինել:

Ներքին կռիւների, աղմուկի և խառնակութեան 15 տարիների ընթացքում Ռոմանովներին ոչ միայն չյաջողուեց դահի հասնել, այլ և Ֆէոդոր Նիկիտիչ Ռոմանովը և նրա կինը հալածանքի ենթարկուեցին և հազիւ ազատուեցին իրանց կեանքին հետամուտ մարդկանց ձեռքից: Նրանք ասիպուած էին երկուան էլ հոգևորականի սքեմ հազնել և հեռանալ քաղաքական ասպարէզից, որպէս զի յետոյ աւելի մեծ իշխանութեամբ ու փառքով հանդէս գային: Ֆէոդոր Ռոմանովի կինը Կսենիան իւր մանկահասակ Միխայիլ որդու հետ վաճառ քաշուեց: Եւ այն ըսպէին, երբ Մոսկովայում տեղի էր ունենում այդ պատմական ժողովը, մայր ու որդի գտնուում էին Կոստրոմա քաղաքում—Իպատիևի վանքում, շատերից մոռացուած:

Ուսպենսկի տաճարում հաւաքուած ժողովականները երկար վիճարանութիւններից և աղմուկներից յետոյ, ոգևորւում են վերջապէս մի տենչով—առաջ միութիւնը կորցրած, ջլատւող պետութեանը մի բնիկ թագաւոր, ռուս ժողովրդի հարազատ մի դաւակի դահ բարձրացնել, և մասնակի համաձայնութիւններից ու փոխադարձ զիջումներից յետոյ բոլորի որոնող աչքը հանգչում է Ռոմանովների տոհմի պատանի Միխայիլի վրայ, որն և միաձայն ընտրւում է թագաւոր Մոսկովեան պետութեան: Ընտրութիւնից յետոյ անմիջապէս տեղի է ունենում հանդիսաւոր մաղթանք նորընտիր թագաւորի առողջութեան համար և բոլորը հաւատարմութեան երդումն են տալիս դահին:

Սակայն ինքը նոր ընտրուած թագաւորը—Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովը Մոսկովայում չէր և ոչ ոք չէր իմանում նրա տեղը: Ուստի ժողովը որոշում է յատուկ պատգամաւորութիւն ուղարկել Եարոսլաւ քաղաքը և կամ այնտեղ, որտեղ Միխայիլը կարող էր լինել: Պատգամաւորութիւնը Ռեազանի արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, մի քանի նշանաւոր իշխանների մասնակցութեամբ մարտի 13-ին երեկոյեան վերջապէս Կոստրոմա քաղաքն է հաս-

Նուժ և հետեւեալ օրը ժողովրդի խուռն քաղաութեան ուղեկցութեամբ դիմում է Բաղատիւի վանքը խնդրելու Միխայիլին, որ թագաւոր դառնայ: Սկզբում թէ Միխայիլը և թէ նրա մայրը անպայման մերժում են պատգամաւորութեան առաջարկը: Միխայիլի մայրը նոյն իսկ լսել անգամ չէր ուզում դրա մասին և դարմանում էր թէ Մոսկովեան ընդարձակածաւալ պետութեան համար ինչպէս կարող է իւր պատանի որդին պիտանի լինել: Պատգամաւորութեան ծանրակշիռ անգամները երկար համոզում էին մօրն ու որդուն, գործ էին դնում իրանց ճարտարութիւնն ու հնարքները, սպառնում էին երկնքի պատժով, պատկերացնում էին հայրենիքի ծանր և աաղնապոտ վիճակը և վերջապէս յաջողութիւն գտան: Պատանի Միխայիլը իւր համաձայնութիւնը տուեց, իսկ նրա մայրը օրհնեց որդուն: Այնուհետեւ արագ պատրաստութիւններ են տեսնում թագաւորին Մոսկիւա բերելու համար. ճանապարհին ամեն տեղ Միխայիլը ականատես էր ուն քաղաքների, իշխանների ու ժողովրդի բուռն սգևորութեան և անկեղծ ուրախութեան, որովհետեւ երկիրը Միխայիլի բնորութեամբ մեծ գրաւական էր ստանում, որ ազմուկը և անկարգութիւնը տեղի կրտան կարգաւորեալ պետական կեանքին:

Միխայիլ Թէոգորովիչ Ռոմանովի գահակալութեամբ ունայ պետութեան մէջ թագաւորող հարստութիւնը փոխւում է: Գահ է բարձրանում Ռոմանովների տունը, որ մինչև օրս իշխում է և որի օրով Ռուսաստանն ընդարձակուում, ծաւալուում է ու հասնում իւր արդի բարձրութեանը: Լոկ դինաստիայի փոփոխութիւն չէր, որ ուն ազգն ու ունայ պետութիւնն ապրում էին այն օրերին: Միաժամանակ, թէև միայն ապագային նկատելի, փոխւում էր նաեւ ունայ պետական կեանքը. անհետանում, վերանում էր ունական պետական բաժանուածութեան, անշատոգ, կենդրոնախոյս ուժերի ներգործութիւնը և ուն պետութեան կեանքը կենդրոնանում էր, հաւաքւում, խրմբւում Մոսկովեան թագաւորների շուրջը: Բազմաթիւ ազմուկների, անթիւ խռովութիւնների տարիներին յաջոր-

դուժ է խաղաղ կենդրոնացած պետական աշխատանքի շրջանը: խաղաղ, ոչ այն մտքով, որ այդ շրջանում պատերազմներ չկան, այլ որ ներքին երկպառակութիւններն ու պետական կեանքի աններդաշնակութիւնը գնալով վերանում է և տեղի տալիս միահամուռ խաղաղ կեանքին:

Ռոմանովների 300 տարուայ պատմութեան ընթացքում Ռուսաստանը իբրեւ մի պետական մարմին մեծացաւ, զօրացաւ, քաղաքական ու զինուորական մի ահաւոր ուժ դարձաւ, նրա հողերը կրկնապատկուեցին, բազմացան, նրա կեանքը բարդացաւ, նրբացաւ ու նա դուրս եկաւ իր ասիական դրութիւնից ու գիմեց Եւրոպական ազգերի կուլտուրական ճանապարհով մասնակցելու համամարդկային կուլտուրական միահամուռ աշխատանքին:

Իմ նպատակից դուրս է այստեղ նկարագրել ու պատկերացնել այդ երեք հարիւր տարուայ պատմութիւնը, որ լի է ուսանելի ու խրատական կողմերով: Ռուսաց կայսերական տան այս պատմական յորելեանի առթիւ ես կուզէի մի ընդհանուր հայեացք ձգել ռուսաց պատմութեան վրայ ընդհանուր պատմութեան տեսակէտից—ուրիշ խօսքով խոշոր դժերով լուսարանել ռուս ազգի կեանքն ու դորժը ընդհանուր պատմութեան լոյսի տակ, համեմատելով ռոմանական—գերմանական ազգերը սլաւոն ցեղի ներկայացուցիչների հետ:

II

Եւրոպայում այժմս ապրող կուլտուրական ազգերը երեք մեծ խմբի են բաժանուում՝ գերմանական, ռոմանական և սլաւոնական ցեղեր: Սկզբնապէս գերմանական ու ռոմանական ցեղերը իրանց ծագումով ու հայրենիքով կազմում էին ցեղերի մի մեծ ընտանիքի երկու ճիւղաւորութիւնները, այնպէս որ այս երեք ցեղերի միջնադարեան պատմութիւնը կարելի է վերածել գերմանական (որի մէջ պէտք է հասկանալ նաեւ ռոմանական) և սլաւոն ցեղերին: Թէև այժմս սովորական է լսել մամուլի և գրականութեան

մէջ, թէ Եւրոպան ծերացել է, նրա ազգերը հին են ու յոգնած, բայց իրօք արդի Եւրոպական նոր ազգերից ամենից հինը հազիւ 1500 տարուայ կուլտուրական կեանք ունի. իսկ 1500 տարին ընդհանուր պատմութեան մէջ, ժամանակի անեզր տեսողութեան դիմաց բացարձակօրէն ոչինչ է: Եւրոպան ծերացած չէ, նա հազիւ է հասել իւր արքունքի հասակին, նա հազիւ է թեւակոխել այն շրջանը, երբ խելահաս ու շրջահայեաց, իւր բովանդակ ուժերի լիակատար գիտակցութեամբ ծաւալում է իւր ընդունակութիւնները ընդհանուր մարդկային քաղաքակրթութեան բազմածալ ու ոլորապատյա ճանապարհների վրայ: Արդի արեւմտեան Եւրոպայի ամենակուլտուրական ազգերը ոչ միայն չեն ծերացել ու չեն յոգնել, այլ նոր են հասել իրանց երիտասարդական տարիքին, երբ գինեւած ժամանակակից գիտութեան և տեխնիկայի ընձեռնած գէնքերով սրընթաց սլանում են գէպի մարդկային կատարելութիւն: Այն շտապովի, տենդային եռանդը, որ այսօր նկատւում է Եւրոպական կեանքի բոլոր Ֆիբրերի մէջ, այն հսկայական ու բարդ մեքենան, որ դործի է դնում եւրոպական բոլոր հասարակութիւններին, արագ ու նեարդային աշխատանքի մղում այդ հասարակութիւնների բոլոր անդամներին, բոլոր դասակարգերին — դա ապացոյց է երիտասարդական անսպառ եռանդի, գէպի աշխատանքն ունեցած խանդավառ ոգեւորութեան, գէպի մարդկային ընդհանուր կատարելութիւնն եղած անդուստ, անյադ տենչանքի և ոչ թէ ծերութեան թոյլ անդօր, ընդարմացած անշարժութեան: Եւրոպան ծերացած չէ, ոչ էլ ծերութեան է դիմում այսօր, այդ ճանապարհը նրանից դեռ շատ հեռու է:

Եւ այսօրուայ եւրոպական երիտասարդ ազգերից ամենից երիտասարդ ցեղը սլաւոն ցեղն է իւր բոլոր ազգային ներկայացուցիչներով: Այն օրերին, երբ գերմանական դանազան ցեղերը եկան թափուեցին Հռոմէական կայսրութեան սահմանների վրայ ու մշտական սպառնալիքի տակ դրին համաշխարհային այդ պետութիւնը, այն օրերին, երբ գերմանական ցեղերը վերջ ի վերջոյ յաղթահա-

րեցին բոլոր արգելքները և խորտակելով հռոմէական լեզիւնների երկաթէ ուժը ներս թափուեցին սահմաններից ու արագ վճռակի ոչնչացրին հռոմէական ընդարձակածաւալ կայսրութեան քաղաքական, պետական միութիւնը և խալաո վերջ դրին կայսերական հռոմի գոյութեան. այն աղմկաշատ ու դժուարին օրերին, երբ գերմանական դահազան ցեղերը խորտակելով հռոմի կայսրութիւնը — այդ կայսրութեան աւերակների վրայ կառուցանում էին Եւրոպական արդի պետութիւնների պարզ, կապիտ ու բարբարոս շէնքերը, երբ իրար յետևից իրրե քաղաքական մարմիններ հանդէս են գալիս Իսպանիան ու Գալլիան — Ֆրանսիան, Իտալիան ու Գերմանիան — այդ նոյն օրերին խօսք անդամ չկար սլաւոն ցեղերի մասին և նոցա մէջ ոչ մի պետութիւն գեռ չէր կազմակերպուած:

Արևմտեան Եւրոպան կամաց կամաց խաղաղւում, հանդատանում է ազգերի գաղթի արհաւիրքներից. ցեղերի լեռնացած կրքերն ու ելած բարձրացած շարժումները տեղի են տալիս և ընդհանուր մակընթացութեան յաջորդում է այժմ տեղատուութիւնը: Բարբարոս Գերմանները եզակի բախտ են ունենում. նրանք, այդ երկարահասակ երկարամօրուք, խտրտեաշ ու բիրտ անտառաբնակները մի անդամից ժառանգութիւն են ստանում հռոմէական դարգացած, նրբացած կուլտուրան. նոքա բնակութիւն են հաստատում այն վայրերում, ուր հռոմէական լեզեոնի հետ նաեւ հռոմէացու կուլտուրան մի քանի դար շարունակ դործել էր: Եւ ինչ կասկած, որ հռոմէացուն յաղթող բարբարոս գերմանները շատ կարճ ժամանակում պէտք է յաղթուէին հռոմէացիների կուլտուրայի ուժից, պէտք է ենթարկուէին նրա դորեղ ազդեցութեանը և ուսմաննային: Գերմանական ազգերից մի քանիսի ուսմանացումը շատ հեշտութեամբ և բնականօրէն է կատարւում: Իտալիայի Լանգոբարդներն ու Օստգոթերը ու Դանուբեան Դակերը, Գալլիա մտնող Ֆրանկները, Սլաւնիայում տեղաւորւող Վեստ Գոթերը — գրանք բոլորը շատ շուտով ենթարկւում են հռոմէական քաղաքակրթութեան և իւրացնում նրանց կուլտուրան: Այսօրուայ Եւ-

բողական Ռոմանական ազգերն հէնց այդ երկիրների բնակիչներն են։ — Միւս կողմից Գերմանական միացած ցեղերը թէև ոչ այն աստիճան, բայց դարձեալ ենթարկուեցին, ազգուեցին Հռոմէական մեռնող կուլտուրայից։

Այսպիսով թէ Գերմանական և թէ Ռոմանական ցեղերը հէնց սկզբից մի բախտաւոր բերմունքով ամենանպատաւոր պայմանների մէջ դրուեցին. այնուհետև նրանց մնում էր աստիճանաբար իւրացնել Հռոմէական կուլտուրան, փոփոխելով, ճոխացնելով ու զարգացնելով։ Այսօրուայ Գերմանական և Ռոմանական ցեղերը իրանց պատմութեան հէնց սկզբից մշակուած դաշտեր դառն ու կուլտուրական վայրերն եղան նրանց շատերի հայրենիքը։

III

Գերմանական ռոմանական ցեղերի դիմաց սլաւոն ցեղը կրկնակի անբարեյաջող պայմանների մէջ էր հանդէս գալիս։ Նախ նկատենք, որ սլաւոններն ընդհանուր պատմութեան մէջ մօտ կէս հազարամեակ ուշ են թեակոխում։ Մինչև 8, 9-րդ դարերը սլաւոն ցեղերը բարրարոս ու վայրի թափառում էին բազմաթիւ խմբերով մերթ Բալտիկ ծովի հարաւային ափերին, մերթ արդի ռուսական գետերի միջին հոսանքներին. յաճախ իրանց արշաւանքների ու թափառումների մէջ նոր ու օտար ցեղերի էին հանդիպում, ընդհարւում նրանց հետ և ապա նորից բաժանւում և այդպէս շարունակաբար։ Բացի այն, որ սլաւոն ցեղերը 4—500 տարի ուշ են երևան գալիս, քան գերմանական—ռոմանական ցեղերը, մի աւելի ծանրակշիռ հանգամանք կայ, որ սլաւոն ցեղերի, յատկապէս Ռուս ազգի պատմական կեանքի յետագայ զարգացումը կապել կաշկանդել է։ Երբ 9-երդ դարի երկրորդ կիսում վերջնականապէս կազմակերպւում է ռուսաց պետութիւնը, մենք տեսնում ենք, որ այդ ցեղը դժբախտութիւն ունի շրջապատուած լինելու բարրարոս, աւազակաբարոյ կիսավայրենի ցեղերով։ Հռոմէական կուլտուրայի հետքն անգամ չկար Ռուսաց բռնած վայրերում.

ամեն կողմից հիսկ ու նովգորոգի իշխանութիւնները շրջապատուած էին յափշտակող, թափառական ցեղերով, որոնցից Ռուս ցեղը ոչինչ չունէր սովորելու, որոնց հետ կռուելու համար սակայն նա ստիպուած էր իւր լաւագոյն եռանդն ու ժամանակը զատնել։ Այդ հանգամանքը կարգինալ նշանակութիւն ունի Ռուսաց պատմութեան համար, որովհետեւ շնորհիւ դրան է զլխաւորապէս, շնորհիւ կուլտուրական կենդրոններից հետու ընկած և բարբարոս ցեղերով շրջապատուած լինելուն է, որ Ռուսաց պատմութեան մանաւանդ սկզբնական շրջաններն այդքան զանգաղ են շարժւում, ծաւալւում։

Նաև մի երկրորդ հանգամանք շատ աննպաստ է ազդում Ռուսաց պատմութեան վրայ. դա սլաւոն ցեղի և յատկապէս Ռուս ազգի բռնած, դրաւած բնութեան ընդհանուր խառակտերն է։ Սարերով ու բլուրներով կտրատւող Սպանիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան նեղ ու սահմանափակ հորիզոններ էին բաց անում սպանացու, ֆրանսիացու, գերմանացու կամ իտալացու համար, երկրի սահմանափակութիւնն ու բաժանուածութիւնը մղում նրանց աւելի կենդրոնացման, աւելի ինտենսիւ աշխատանքի, ժողովրդական մասսաների աւելի սերտ ու իրար մօտ համախմբման։ Իսկ Ռուսաստանում դրա բոլորովին հակառակը. լայն ու ընդարձակ տափաստանները, անսահման երկիրը, անտառների անվերջ շարքերը բնականօրէն ստիպում էին սլաւոն ցեղերին տարածուելու, ցրուելու, նստրանալու և այգալիսով համախմբուած, միահամուռ աշխատանքի հնարաւորութիւնը սկզբում ակնյայտնի կերպով բացակայում էր։

Այսպիսով այս երեք հանգամանքները — մօտ 500 տարի ուշ պատմութեան ասպարէզ մտնելը, աւազակաբարոյ, կիսափայրենի ու թափառական ցեղերով շրջապատուած լինելը և անսահման ու անծայր բնութեան մէջ ապրելը — պայմանաւորում են Ռուսաց պատմութեան ազագայ ընթացքը և շատ աննպաստ կերպով պայմանաւորում և հէնց դրանով Ռուսաց պատմութիւնը զանազանում, անշատում

Արևմտեան Եւրոպայի ազգերի՝ գերմանական ռումանական ցեղերի պատմութիւնից: Բայց դրանով չի վերջանում դեռ տարբերութիւնը:

Մինչև այսօր Ռուսաց պատմաբանները մէջ դեռ հաստատուն կարծիք և տիրող տեսակէտ չկայ այն ազգեցութեան և ներդրութեան մասին, որ մոնղոլների տիրապետութիւնը ունեցել է Ռուսաց ազգային և պետական ներքին ու արտաքին պատմութեան վրայ: Յայտնի է, որ տախական հրոսակախմբերի հսկայական արշաւանքը Ռուսաստանի և արևմտեան Ասիայի համար ողբալի հետեանքներ ունեցաւ: Մոնղոլները տիրեցին բովանդակ Ռուսաստանին և մօտ երեք դար հաստատուն նստան այս «շիկահեր ու կապոյտաշեայ սպիտակամորթների» աշխարհում: 300 տարի մոնղոլները իշխեցին Ռուսաստանում: Ճիշտ է, այդ ժամանակամիջոցում նրանք իշխանների ներքին կառավարութեան եղանակի և ձևի մէջ չէին մտնում, սակայն նրանք էին երկրի տէրը: Մոնղոլական տիրապետութեան շրջանում Ռուսաստանը կանգ առաւ իւր նոր սկսած պետական տղրեսիւ ընդարձակման մէջ և կորցրած իւր քաղաքական ինքնուրոյնութիւնը, մի բանի մասին պէտք է հոգ տանէր այնուհետև. որքան կարելի է կանոնաւոր ու պարբերաբար ուղարկել մեծ խանի հարկը, կատարել սրարոյրը ցանկութիւնները, չգրգռել մոնղոլ իշխանաւորների բարկութիւնը:

Ինչքան էլ ռուս պատմաբաններն այսօր լռութեամբ անցնելու լինեն այդ շրջանի վրայով, ինչքան էլ նրանք վիճեն իրար հետ և մոնղոլական տիրապետութեան հետեանքների ու ընաւորութեան մասին տարակարծիք լինեն — յամենայն դէպս այսքանն այսօր պարզ է, որ այդ տիրապետութիւնը կուլտուրայի ու քաղաքակրթութեան ամենասոսկալի թշնամիների տիրապետութիւն էր: Ռուսաստանի վաճառաշահ, փարթամ ու հարուստ քաղաքները կողոպտուեցին, հոյակապ և հաստահեղոյս տաճարները խորտակուեցին, աւարի առարկայ դարձան ոչ միայն Ռուսաստանի հարստութիւնները, այլ և ամբողջ ազգաբնա-

կութիւնը սարսափահար եղած, ստիպուած էր լուռ վկայ լինել, թէ ինչպէս մոնղոլները իրանց կանանց ու աղջիկներին գերի են տանում մեծ խաների ու մոնղոլ իշխանների մօտ: Կատաղի ու վայրագ նուաճմանը յաջորդում է ծանր, երկարատև տիրապետութիւնը, որի ընթացքում կարելի է ասել, որ Ռուսաց պետութեան բնական ընթացքը սլակասում, կանգ է առնում — կամ յամենայն դէպս նրա զարգացման տեմպը չափազանց դանդաղում է: Ռուսաստանի քաղաքակրթութիւնը, անկախ ու ինքնուրոյն զարգացումը այսպիսով 300 տարուայ ընթացքում վտանգի է ենթարկւում և կաշկանդուած մնում: — Այդ հանգամանքը նոյնպէս շատ կարևոր մամենտ է, երբ խօսք է լինում Եւրոպական ազգերի՝ գերմանական—ռոմանական պետութիւնների և սլաւոն, յատկապէս ռուս ազգի համեմատութեան մասին: Ծիշա է, մոնղոլները Ռուսաստանի վրայով առաջ անցան մտան նաև Լեհաստան, ապա նաև Գերմանական կայսրութեան դաւառները, բայց անմիջապէս դարձեալ յետ դարձան և պինդ ու հաստատուն նստեցին Ռուսաստանում — միանգամայն ձեռք քաշելով Եւրոպական երկիրներին:

Այսպիսով Գերմանական—ռոմանական կուլտուրան փրկուեցաւ և արգելքի չհանդիպեց մոնղոլների կողմից: Ազգերի մեծ շարժումներից յետոյ — ուրեմն հինգերորդ դարից յետոյ Եւրոպայում չի եղել ժողովուրդների և ոչ մի շարժում, որ պետութիւններ կործանէր ու կուլտուրաներ ոսնատակ տար. այստեղ չեն երևացել ոչ սելջուկները և ոչ մոնղոլները. այստեղ ոչ մի բարբարոս ցեղ կամ ժողովուրդ չի կարողացել հաստատուն հող գտնել և խաւացին ու գերմանացին, Ֆրանսիացին ու անգլիացին զարգացել են ազատ ու անկաշկանդ: Ծիշա է, այս ժողովուրդների մէջ ևս եղել են արգելափակ հանգամանքներ — կրօնական պատերազմներ, նուաճողական կռիւներ ու դիւղական շարժումներ — բայց դրանք բացառութիւն չեն նաև Ռուսաստանի համար, որի վրայ բացի գրանցից ծանրացած էր մոնղոլական 300 տարուայ ծանր ու զաժան լուծը:

Այս բոլորից յետոյ պարզ է, թէ ինչու ռուսներն պատմութիւնը, ռուս ազգի զարգացման ընթացքը դանդաղ է եղել, թէ ինչու ռուսը աւելի երկար միջնադար է ունեցել ու աւելի ուշ հասունացել նոր ժամանակների համար։ Այն ժամանակները, երբ գեղեցիկ Իտալիայում իրանց անմահ երկերն էին ստեղծագործում Գոնտաբլոն ու Տիցիանը, Ռաֆայելն ու Միքել Անջելոն, երբ հումանիզմի և նոր ժամանակների նախակարգականները երգում էին իրանց մշտաթարմ երգերը—Գանաէն ու Պետրարիան, միւս կողմից երբ Փարիզի, Վիեննայի ու Օքսֆորտի համալսարանները՝ դիտական այդ պատկառելի կաճառները իրանց պատերի տակ բազմահազար ուսանողների էին հաղորդակից անում դիտութեանն ու արուեստներին, գրականութեանն ու դպրութեանը—այդ գեղեցիկ ու հետաքրքիր օրերին Ռուսաստանը՝ երկար տառապած մոնղոլական լծի տակ—ճգնում էր ազատուել, թօթափել օտարի բեռը և ազատ անկախ ապրելու նախապայմաններ ստեղծել։ Հումանիզմը և ռեֆորմացիայի հետ կապուած նորդարեան գաղափարները չէին կարող Ռուսաստանում միաժամանակ առաջ գալ։

IV

Ամփոփելով մեր ասածները կրեանենք, որ Եւրոպական միջնադարեան պատմութեան կրողները ռոմանական-գերմանական ազգերն են. սրանք են, որ իրանց հաստատութիւններով, իրանց ուժերի յարաբերութեամբ պայմանաւորում են միջնադարեան պատմութիւնը։ Սլաւոն ցեղը և յատկապէս Ռուս ազգը ուժ չէ այս շրջանում և Եւրոպական պատմութիւնների քաղաքականութեան մէջ նա չէ գրաւում որևէ դիրք, նա չէ պայմանաւորում որևէ շարժում, որովհետև նա չէ ներկայացնում որևէ զօրութիւն։ Ճիշտ է, այս շրջանում ևս սլաւոնները երբեմն Բոհեմիայում, երբեմն Բուլղարիայում, Սերբիայում կամ Լեհաստանում զգալի ուժի են հասնում և մի առժամանակ պատկառելի զօրութիւն կազմում—բայց դոցանից և ոչ մէկը

չի կարողանում Եւրոպական նշանակութիւն ստանալ և ազդել Եւրոպական քաղաքակրթութեան վրայ: Միջնադարեան Եւրոպական պատմութիւնը—դա լոկ Գերմանական—ռոմանական ազգերի պատմութիւն է: Ռուսաստանն այստեղ տեղ չունի, և մենք արդէն բացատրեցինք թէ ինչու:

Թաթարների լծից ազատուելը ռուսներին լոկ քաղաքական ազատութիւն է տալիս—ռուսական ցրտած ու անշատ իշխանութիւնները համախմբւում են Մոսկովի ցարերի շուրջը, ընդունում նրանց գերիշխանութիւնն ու հպատակում նրանց: Երկիրը քաղաքականապէս միանում, ամբողջանում է: Եւրոպական պատմութեան տեսակէտից Ռուսաց պատմութեան կրիզիսը տեղի է ունենում այն խառնակ շրջանում, որի մասին մենք վերևում ակնարկեցինք: Բորիս Գոդունովի ուզուրպացիան, կեղծ Դիմիտրների խառնակ շրջանը, Վասիլիյ Շույսկու վատթար կառավարութիւնը և վերջապէս Միխայիլ Ֆէոդորովիչ Ռոմանովի ընտրութիւնը—ահա այն էտապները—որոնցով բնորոշւում է այդ ճգնաժամը: Եւ իսկապէս Ռոմանովների գահ բարձրանալով և նրա մօտիկ հետեանքների ազդեցութեամբ կարելի է ասել վերջացած պիտի համարել ռուսաց պատմութեան մէջ միջնադարեան փակուածութեան, նրա քաղաքական անազդեցիկ դրութեան, ինչպէս նաև ռուսաց լուռ և կղզիացած գոյութեան շրջանը: Եւրոպական ազգերի մէջ միջին դարը վերջանում է 14, 15-երդ դարերում—Ռուսաստանում նա դեռ շարունակւում է ամբողջ 16 և 17 դարերում: Բայց երբ մի անգամ ռուսները քաղաքակրթութեան և կուլտուրայի նոր ճանապարհ են բռնում—այնուհետև նրանք շարունակւում են այդ ճանապարհով անշեղ և անսայթաք ընթանալ:

Սովորաբար մարդիկ կարծում են, որ քաղաքակրթութեան ճանապարհը բոլոր ազգերի համար նոյն երկարութիւնն ունի. որ պատմութեան շէմքը նոր ոտք դնող ազգերը պէտք է անհրաժեշտօրէն անցնեն այն երկար ու ձիգ ճանապարհը և որ զիսաւորն է ժամանակի նոյն ակողմութեամբ, ինչ որ արդէն քաղաքակիրթ ազգերը: Պարզենք

մեր ասածը մի օրինակով: Եւրոպական ազգերն այսօր
կանգնած են կուլտուրայի որոշ բարձրութեան վրայ. նրանք
այդ աստիճանին հասել են երկար ու աստիճանական, տո-
կուն ու համբերատար աշխատանքի միջոցով. իրանց վե-
րելքի մէջ նրանք միշտ անսպաթաք ու շեշտակի չեն ըն-
թացել, ունեցել են և զիգզագներ, պատահել են անյաջո-
ղութիւնների, իրանց ճանապարհին երբեմն վնասուած կանգ
են առել—բայց վերջ ի վերջոյ արդիւնքն այն է եղել այդ
պայքարի, որ նրանք յաղթահարելով բոլոր արգելքներին —
թեւեղութիւն են մարդկային քաղաքակրթութեան վերին բար-
ձրութիւնները: Դրանք Եւրոպական այժմուայ ազգերն են,
որ որոշ կուլտուրական անցեալ ունեն և ներկայումս բարձր
քաղաքակրթութեան տէր են:—Ընդհանուր մարդկութեան
համար շատ ցաւալի կրկինէր, որ իւրաքանչիւր նոր ցեղ,
որ ընդհանուր պատմութեան դանից ներս է մտնում—
ստիպուած լինէր կուլտուրայի այն բոլոր փաղերը անցնել,
որ արդի քաղաքակիրթ ազգերն անցել են. ցաւալի և տա-
րօրինակ կրկինէր, որ իւրաքանչիւր նոր ազգ կուլտուրայի
արդի բարձրութեանը հասնելու համար ստիպուած լինէր
այն երկար, ոլորապսոյտ ու դժուարին ճանապարհներով
քայլել, ունենալ ու ապրել գոյութեան պայքարի այն բազ-
մաթիւ ու խոր ծալքերը, որ արդի քաղաքակիրթ ազգերն
ունեցել են: Այդ կրնշանակէր ազգերի փոխազդեցութիւնն
խալառ բացառել, պատմութեան սեփականութիւն գար-
ցած կուլտուրայի նուաճումների ազդեցութիւնը ի չիք
հռչակել:—Բարեբախտաբար այդպէս չէ, բարեբախտաբար
նոր ու թարմ, երիտասարդ ու եռանդուն ցեղերը, որոնք
կրակոտ ու ինտենսիւ թափով ընդհանուր պատմութեան
մէջ են նետւում—մասնակցելու մարդկութեան քաղաքա-
կրթական աշխատանքին, դաս առնելով, ազդուելով ու
հիմնուելով իրանցից առաջ եղած ու ժամանակակից քաղա-
քակիրթ ազգերի անցկացած ճանապարհի վրայ—աւելի
հեշտութեամբ են շարժւում կուլտուրայի վերին կայան-
ները: Դժուարը ճանապարհ բաց անելն է, բացած ճանա-
պարհով հեշտ է այնուհետեւ ընթանալ: Այս գիտակցութեան

վրա, է հիմնուում առաջնորդների, առհասարակների արժանիքն ու փաստը:

Մեր առաժնեքն ամբողջովին վերաբերում են նաև սլաւոն ցեղերին և ուստի ազգին: Երբ 9-երդ դարում երիտասարդական թարմութեամբ սլաւոն ցեղերը պատմութեան ասպարէզ են դալիս—ու յետագայ դարերում միասնում կազմակերպւում—նրանք էլ կարող էին եւրոպական մտաւոր ու քաղաքակրթական աշխատանքին մասնակցել, եթէ իրենց ճանապարհի վրայ չունենային այնպիսի արգելքներ, ինչպէս մոնղոլական քաղաքարեան տիրապետութիւնը և անկուշտութիւնը հարեանների մշտական ճնշումը: Բայց ինչպէս ասացինք, մի անգամ, երբ վերացած է այդ արգելքը— ուսաներն այնուհետև կենդրոնանալով ու ուժերն հաւաքելով շեշտակի դիմում են քաղաքակրթութեան բարձրունքներին հասնելու:

V

Ռոմանովների իշխանութեան առաջին շրջանում ընկնում է ուստի ազգի առաջին և զօրեղ ջանքերը դուրս գալ ասիական—կէս եւրոպական գրութիւնից, դուրս գալ փակուած ու կղզիացած վիճակից ու եւրոպական ազգերի ընտանիքի մէջ տեղ որոնել: Ռոմանովների հարստութեան բախտը հէնց նրա մէջ է, որ Պետրոս Մեծը չի ուշանում ծագել Ռուսաց պատմութեան մէջ:

Պետրոս Մեծը այն անձնաւորութիւնն է, որից յետոյ Ռուսաստանն այն չէ, ինչ որ Մոսկովի ցարերի պետութիւնը: Մենք այստեղ ևս հնարաւորութիւն չունենք Պետրոս Մեծի և նրա յաջորդների մասին առանձնակի կանգ առնել և բնորոշել իւրաքանչիւր իշխողի կառավարութիւնն ու ժամանակը: Ռուսաց պատմութեան այս շրջանում ևս մենք կրտանք ամենաբնորոշանութիւնը գծերով և համառօտակի ամբողջ էությունիւ բնութագրել:

Այդ էությունն սկսում է Պետրոս Մեծից և շարունակւում է մինչև մեր օրերը: Մի ժամանակ է դա, երբ ուստի

ները հետզհետէ իրանց զգալ են տալիս և կամաց կամաց տեղ դրաւում Եւրոպական պետութիւնների ընդհանուր կոնստեղլացիայի մէջ։ Պետրոս Մեծի պատերազմները և նրա քաղաքական նուաճումները, նրա ներքին ռեֆորմները և իմպուլսիւ բարենորոգումները շատ խորապէս ցնցեցին աւաններին ու եւրոպական ազգերի ուշադրութիւնը դրաւեցին։ Այս ինքնատիպ ու հզօր իշխանը մի պատուհան քաց արաւ Ռուսաստանի համար, մի պատուհան, որից պէտք է եւրոպական լոյսն ու կուլտուրան ճառագայթէր դէպի ներս։ Պետրոս Մեծի յաջորդներին ու ռուս ազգին մնում էր այնուհետեւ այդ պատուհանը աւելի ու աւելի մեծացնել, եւրոպան ու Ռուսաստանն անջատող խոր վները աւելի ու աւելի ջանալ լցնել։ Եւ ռուս պատմարանն այսօր կարող է առանձին դոհունակութեամբ շեշտել, որ ամբողջ յետագայ աշխատանքն այդ ուղղութեամբ է եղել, որ Պետրոս Մեծից մինչև այսօր ռուս ազգը դէպի այդ կուլտուրան է ընթացել։

Այս շրջանում է, որ ռուս պետութեան քաղաքական ուժը ընդարձակւում, ծաւալւում և ծովանում է—նրա հողային նուաճումների հսկայական ծաւալի հետ։ Բաւական է յիշեցնել Ալէքսանդր Ա-ի զրաւիչ ու խորհրդաշատ դէմքը—բաւական է վերյուշել հայրենական պատերազմները, որի փառաւոր հարիւրամեակն համայն Ռուսաստանն անցեալ տարի հանդիսաւորապէս կատարեց—որ իսկոյն զգալի լինի Ռուսաց պետութեան քաղաքական ուժի ահաւոր աճումը։ Այն օրերին, երբ բովանդակ եւրոպան կուշ էր եկել Նապոլէոն Բոնապարտի երկաթէ հարուածների տակ, երբ խիզախ Կորսիկացին անսահմանօրէն իշխում էր եւրոպական մայրաքաղաքներում և Ֆրանսիական դինւորական լուծը կոշմարի նման խեղդում էր եւրոպական ազգերին—այդ օրերին էր, որ Ալէքսանդր Ա-ն ու իւր ազգը դուրս եկան Նապոլէոնի դէմ ու նշան տուին ազգերի ազատարար կռուին։ Ռուսաստանը, որ նոր նոր էր ազատւում միջնադարեան կուլտուրայի կապանքներից—այժմ ինքն է դալիս եւրոպային քաղաքական ազատութիւն

տալու: Մի անգամից բոլորի հայեացքը դառնում է գէպի Ալէքսանդր Ա. մի անգամից Ներսիսյի վեհապետները նրա բարեկամութիւնն ու Ռուսաստանի դաշն են փնտրում: Ալաւոն ցեղը գրաւում է գերմանական-ռումանական ազգերի մէջ իրան պատշաճ և պատուաւոր տեղը:

Այնուհետև այդ քաղաքական գորութիւնն ու գինւորական հեղեմոնիան շարունակում է նաև Նիկողայոս I-ի ժամանակ, երբ ամբողջ Ներսիսյան կամ յարգում էր Ռուսաստանին և կամ սարսափում նրանից, որովհետև Նիկողայոս I-ի դնդերը պատրաստ էին պաշտպանելու սրբազան դաշնակցութեան հիմնական սկզբունքները:

Քաղաքական ուժի, տերրիտորիալ նսեմանքների հետ դուզընթացաբար մեծանում, հասունանում էր ռուսի ազգային գիտակցութիւնը, հարստանում, ճոխանում էր նրա հոգևոր, մտաւոր կեանքի բովանդակութիւնը—ստեղծւում էր ռուսաց ինքնուրոյն ճոխ ու ինքնատիպ, հարուստ ու առողջ զրականութիւնը:

Այս բոլորից յետոյ շատ պարզ է, որ Ռուս մեծ ազգը և ռուսաց մեծ պետութիւնը անտարբեր չէին կարող մնալ փոքր ազգերի և յատկապէս ալաւոն այն ցեղերի վիճակի դիմաց, որոնք դարերէ ի վեր տառապում էին Օսմանեան լծի տակ: Մերձաւորին օգնելու, թոյլին զօրավիգ լինելու մարդասիրական այդ ձգտումների իսկական հիմքը բնականաբար առողջ ողջամիտ քաղաքականութիւնն էր, որ կշռադատութեան էր առնում իրերի իսկական, բնական յարաբերութիւնը և դրանց աէալ ուժերի յարաբերութեան վրայ հիմնաւորում պետական որևէ դործողութիւն: Այդ առողջ քաղաքականութիւնն էր ու ողջամիտ կշռադատութիւնը, որ ռուսներին շատ շուտով հանեց թուրքերի դիմաց: Եւ ռուս ազգը երկրորդ անգամ հրապարակ եկաւ իրրեւ ազատարար հրեշտակ, փրկիչ հանդիսանալով այս անգամ ալաւոն ազգերին:

Եւ ահա առաջինը Ռուսաց թագաւորներից, որ այդ խնդիրն ըմբռնում է իւր բովանդակ պարզութեամբ, Պետրոս Մեծն է: Նա զգում է, որ Ռուսաստանի համար ան-

հրաժեշտ է կամ Բաղաիկ ծովը և կամ Սև ծովը: Եւ շուտով այն գիտակցութեանն է դալիս, որ երկուսն էլ անհրաժեշտ են: Սակայն այդ ծովերին հասնելու, տիրելու համար անհրաժեշտ էր նաեւ կռիւր, երկարատե ու յամառ կռիւր: Ու այդ կռուի անխուսափելիութեան խոր գիտակցութեամբ Ռուսաստանի առաջին մեծ թագաւորն ու պետական մեծ գործիչը բաց է անում ոսւթ-թուրքական կռիւների երկար շարքը, որի վախճանը գեռ ոչ ոք չի տեսնում, պատերազմների մի շրջան, որի իւրաքանչիւր ֆազը նորանոր նուաճումներ էր բերում ուսական գէնքին ի հաշիւ Օսմանեան կայսրութեան:

Յատկապէս Եկատերինա Մեծ կայսրուհու օրով աւանդութիւն է դառնում այն հայեացքը, որ իւրաքանչիւր Ռոմանով իւր գահակալութեան միջոցին գոնէ մի անգամ պէտք է պատերազմի թուրքերի դէմ:

Ինքը Եկատերինա կայսրուհին սկսում է մի շարք կռիւներ թուրքերի հետ: Մեզ հետաքրքիր է այդ կռիւներից մէկը, որ վերջանում է 1774 թուին Կուչուկ Կայնարջու խաղաղութեամբ: Ըստ այդ խաղաղութեան թիւրքիայի ուժը թուլանում է Սև ծովեան շրջանում: Այդ թուին առաջին անգամ Բարձրագոյն Դուռը Ռուսաստանի իրաւունքը ճանաչում է թիւրքիայում ապրող քրիստոնեաներին պաշտպանելու վերաբերմամբ: Կուչուկ Կայնարջին դառնում է այսպիսով արեւելեան բաղամակնճիս հարցի ծննդավայրը: Քաղաքական աշխարհի համար այդտեղ է սկիզբ առնում արեւելեան հարցը և Ռուսաստանն է, որ նրա կրնքահայրն է լինում: *)

Օսմանեան լծի տակ հեծող ու տառապող քրիստոնեաների — ուլաւոն փոքր ազգերի համար բարեբախտութիւն էր, որ նրանց աղատասիրական ձգտումները ոչ միայն չէին հակասում ռուսների քաղաքական նպատակներին, որ ընդառաջ էին դալիս այդ նպատակներին և ռուս ազգն ու ռուս

*) Արեւելեան հարցի մասին համեմատել մեր յօդուածները «Արարատ» 1912 թ.

պետութիւնը կարծես բնականից կոչւում էր ազատարար, փրկիչ հրեշտակ հանդիսանալ սերբի ու բուլղարի, վալախի ու չերնոգորցու համար: Եւ Ռուսաստանը քաջ գիտակցել է իւր այդ պատմական-քաղաքական դերը և միշտ պատրաստի բանակներ է ունեցել Գանուրն անցնելու, երբ հանգամանքներն այդ պահանջել են: Եւ այնուհետեւ չէ եղել մի քրիստոնեայ ազգ, որ ազատուի թիւրքական լծից առանց Ռուսաստանի զինուած միջամտութեան, առանց նրա կտրուկ և լուրջ պահանջների: Ռուս մեծ ազգի և ռուսական քաջարի զնդերի հերոսական ջանքերին պէտք է վերագրել, որ իրար յետեից ազատւում, թիւրքական լուծը թօթաթում էին Յունաստանն ու Չերնոգորեան, Բուլղարիան ու Սերբիան, Ռումինիան, Հերցեգովինեան ու Բոսնեան: Սլաւոն մանր ազգերն այդ հանգամանքը շատ լաւ գիտակցում են և երախտագէտ ու շնորհակալ հայեացքներն յառած ունին շարունակ դէպի սլաւոնական ցեղերից ամենամեծ ու անուանի ցեղի—ռուս ազգի միապետը:

VI

Այսօր—20-րդ դարի սկզբում սլաւոն ցեղն այլևս այն աննշան ու երկրորդական դերը չի խաղում, ինչ որ Եւրոպական միջին դարումն էր: Այսօր համաշխարհային կեանքի ու քաղաքականութեան մէջ ոչինչ չի կատարւում այլևս, որի մէջ Ռոմանովների տունը իւր մեծ ազդով, ընդարձակ պետութեամբ իւր ծանրակշիռ խօսքը չասէր: Գերմանական ռոմանական ազգերն այսօր շատ բարձր են դնահատում մեծազոյն սլաւոն ցեղի—ռուս ազգի այդ հսկայական ուժը և ի հաշիւ առնում Ռուսաստանի ցանկութիւններն ու ձրգտումները: Այսօր Եւրոպական միապետները, մանր ու խոշոր իշխանները փնտրում են ռուսական կայսեր, ռուսաց ազգի բարեկամութիւնը, և այդ բարեկամութիւնը շահելու համար պատրաստ են մեծամեծ զիջումների:

Պատմագիտութիւնը ազգերին ու ժողովուրդներին չի մեղադրում, բայց և չի արդարացնում. նա միայն լուսա-

բանում է եղելութիւնը: Եւ անցեալի անաչառ լուսարանութիւնը ու ներկայի բազմակողմանի հետազօտութիւնը մեզ այն համոզումն է ներշնչում, որ սլաւոն ցեղը, որ միջին դարում դեր չունէր, որ նոր դարերում հաւասար նշանակութիւն է ձեռք բերում միւս ազգերի հետ—այսուհետեւ աւելի ու աւելի բարձրանալով ներքուստ ու արտաքուստ —կուլտուրապէս ու գինուորապէս աճելով, բարգաւաճելով մենակ է դիմելու կատարելութեան բարձրագոյն կատարները: Ռուսաց ազգի և Եւրոպական ժողովուրդների պատմութիւնը մեզ յանգել է տալիս այն խոր համոզմանը, որ սլաւոն ցեղը իւր մեծանուն ներկայացուցիչով՝ — ռուս ազգով պատրաստում է լինելու ապագայ պատմութեան ահաւոր կրողը: Այն վիթխարի ընդարձակութիւնը, որ ունի Ռուսաստանը, այն անբաւ ու անյատակ հարստութիւնը, որ այս երկիրը թաղցնում է իւր կուսական ծոցերում, այն հարիւր միլիոնաւոր բնակչութիւնը, որ կազմում է այս վիթխարի պետութեան շարժիչը—մեծագոյն գրաւականներ են, որ սլաւոն ցեղը ռուս ազգի գլխաւորութեամբ արագ ու հաստատ կենդրոն է դառնալու համաեւրոպական կեանքի ու քաղաքականութեան:

Ռումանովների կայսերական տան երեքհարիւր ամեայ մեծաշուք հանդէսը ռուսաց ազգի բարձրացման, քաղաքականապէս և կուլտուրապէս բարգաւաճման, նրա արտաքին զօրութեան ծովացման հանդէսն է: Այդ հանդէսը շատ զօրեղ ու ազդու կերպով կըշեշտի ռուսաց ազգային հզօրութեան ինքնագիտակցութեան ու ազգային փառքի աճումը:

Մեզ կովկասցիներին համար յատկապէս Ռուս թագաւորող տունը, Ռուս քաղաքականութիւնը երկար տառապանքի, խառնակութեան ու վայրի տիրապետութիւնից յետոյ վերջապէս կարգ ու կանոն, կեանքի ու գոյքի ապահովութիւն և գրա հետ միասին խաղաղ կուլտուրական աշխատանքով պարապելու հաստատ հնարաւորութիւն է բերել: Մեր գեղեցիկ երկիրը դարեր շարունակ պարսիկ ու թուրք հրոսակախմբերի աւազակային ու կողոպտիչ արշաւանքների աւարն էր. իրաւունքի ու արդարադատութեան

կատարեալ բացակայութիւնը, ինչպէս նաեւ ապրելու և ստացուածքի բացարձակ անապահովութիւնը ռուսական տիրապետութեան տակ շատ շուտով փոխւում է կարգաւորեալ, իրաւական պետութեան հասարակակարգին, որի մէջ բազմալեզու, բազմատարր Կովկասը կուլտուրական աշխատանքի ճանապարհն է ընկնում:

Այսօրուայ համառուսական մեծ տօնը մեզ Կովկասցիներին յատկապէս մի յարմար առիթ է վերյուշելու մեր երկրի անցեալը, քրքրելու այդ անցեալի թերթերը մէկիկ մէկիկ: Եւ կասկած չունեմ, որ այդ վերյուշումները մեզ աւելի ու աւելի պինդ կը կապեն ռուս մեծ ազգի հետ, աւելի կը քսերտացնեն մեր բարեկամական զգացումները դէպի ռուսական մեծանուն ժողովուրդը, որպէսզի ռուսաց ապահով ու հաստատ հովանու ներքոյ մենք Կովկասցիներս էլ կարողանանք մասնակցել ընդհանուր մարդկային աշխատանքին, նրա խաղաղ կուլտուրական որոնումներին ու պայքարին:

Փէոդ Ալթունեան

Փետր. 20.